ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 18-Ա

05 մարտի 2012 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ) ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐԸ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2012 թվականի մայիսի 6-ին կայանալիք հերթական ընտրություններին մասնակցող թեկնածուների և կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար նախընտրական քարոզչության հավասար պայմաններ ստեղծելու անհրաժեշտությունը, քարոզչական աշխատանքների կարևորությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Ընտրական օրենսգրքի» 20-րդ հոդվածի 3-րդ մասով, 21 հոդվածի դրույթներով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Վերոհիշյալ աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով
   հանձնաժողովի նախագահ՝ - Մ. Նազարյան
   անդամներ՝ – Գ. Վ. Գրիգորյան
   Գ. Գրիգորյան
   Ի. Պետրոսյան
   Վ. Սահակյան
   Տ. Գրիգորյան
2. Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր թեկնածուների և կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) քարոզչական պաստառները փակցնելու համար Մարալիկ համայնքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը.
   1) Մշակույթի տան հարակից հրապարակում՝ քաղաք Մարալիկ, Մադաթյան 2 հասցեում, տեղադրված երկու հայտարարությունների ցուցատախտակները՝ յուրաքանչյուրը 5 քմ, ընդհանուր մակերեսով:
   2) Մարալիկ քաղաքի գիշերային լուսավորության ցանցի հենասյուների միջնամասում՝ Հաղթանակ փողոց 15 քմ, Մադաթյան փողոց 15 քմ, Կոլտնտեսականների փողոց 15քմ, Հր. Շահինյան փողոց 30 քմ:
3. Հանձնաժողովի կարևոր խնդիրը համարել օրենքով նախատեսված կարգով աջակցելու քարոզչական պաստառների և այլ նյութերի օգտագործման հետ կապված աշխատանքներին:
4. Հանձնաժողովի նախագահ Մ.Նազարյանին
   Սույն որոշման օրինակն ուղարկել կենտրոնական ընտրական հանձնաժողով:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ է